

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԻԱԿԱՅ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՅՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի Պատգամաւորական ժողովի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Թեմակալ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արգար Էպիսկոպոս Հովակիմեանին և հոգևոր ուխտապահ դասին, Թեմական Խորհրդի պատուարժան անդամներին ու ժողովի բոլոր մասնակիցներին:

Միրելի զաւակներ Մեր, հայրենի մեր երկիրը դժուարին օրեր է ապրում: Անցեալ տարի մեր ժողովուրդը դիմակայեց Արցախի դէմ Թուրքիայի օժանդակութեամբ Ադրբեջանի սանձազերծած պատերազմին, որի հետևանքով ցաւալիօրէն ունեցանք տարածքային զգալի կորուստներ, հազարաւոր զոհեր, վիրավորներ ու տեղահանուածներ, բազմաթիւ գերեզմաններ, վտանգուեց Արցախի ապագան: Մենք, ցաւ ի սիրտ, ականատես ենք Ադրբեջանի ենթակայութեան տակ յայտնուած տարածքներում մեր վանքերի ու եկեղեցիների պղծմանն ու աւերմանը, մեր հոգևոր ու մշակութային հնաւանդ ժառանգութեան ոչնչացմանը: Այս օրերին թշնամին ոտնձգութիւններ է իրականացնում նաև Հայաստանի սահմանների հանդէպ, վտանգում մեր սահմանամերձ բնակավայրերի խաղաղ կեանքը:

Այս ծանր ու դժուարին ժամանակներում մենք կոչուած ենք համազգային մեր ջանքերի ու հնարաւորութիւնների համախմբումով պայքարելու յանուն մեր Հայրենիքի զօրացման ու ապահովութեան: Այս առիթով բարձրօրէն գնահատում ենք, որ պատերազմի ընթացքում Կանադայի Հայոց Թեմը կարևոր օժանդակութիւն բերեց «Մենք ենք, մեր սահմանները, բոլորս Արցախի համար» ծրագրին, իսկ այս օրերին շարունակում է աջակցել Արցախում բնականոն կեանքի վերականգնմանը: Նախընթաց ամիսներին Արցախի և Արցախից տեղահանուած հազարաւոր կարիքաւորներ օգտուել են մեր Սուրբ Եկեղեցու բարեգործական նախաձեռնութիւններից: Մայր Աթոռ Սուրբ Սուրբ Էջմիածինը աշխարհափիւռ իր թեմերի օժանդակութեամբ այսօր էլ շարունակում է իրականացնել «Զօրակցենք Արցախին» բարեսիրական ծրագիրը՝ կոչուած ծառայելու պատերազմի հետևանքների վերացմանը և Արցախի Մեր զաւակների սոցիալական խնդիրների լուծմանը:

Միրելիներ, աւելի քան մէկ տարի աշխարհն ապրում է համավարակի պայմաններում: Այս իրավիճակը նոր դժուարութիւններ ու խնդիրներ ստեղծեց նաև մեր Սուրբ Եկեղեցու համար՝ իրականացնելու իր տիրաւանդ առաքելութիւնը մեր

ժողովրդի կեանքում: Տեսական ժամանակ գտնուելով համավարակի սահմանափակումների ներքոյ՝ մեր հոգևոր դասի և վարչական պաշտօնէութեան հետևողական ջանքերով ի սփիւռս աշխարհի կարելին ի գործ դրուեց հովուական կեանքի կազմակերպման համար՝ օգտուելով նաև արդի տեխնոլոգիական հնարաւորութիւններից: Այսօր գնահատանքով ենք անդրադառնում, որ Կանադայի Հայոց Թեմում ևս հետևողական աշխատանք իրականացուեց՝ յաղթահարելու համավարակի ստեղծած խոչընդոտները և շարունակելու հոգևոր խնամատարութիւնը մեր հաւատացեալներին՝ աստուածգիտութեան լոյսն առատացնելով հայ կեանքում:


Հայրական Մեր յորդորն է Պատգամաւորական ժողովի յարգարժան մասնակիցներիդ, որ այս դժուարին ժամանակներում շարունակէք քաջարելութեամբ գործել յանուն մեր ազգային իղձերի ու նպատակների իրականացման և ձեր հնարաւորութիւնները միախառնէք համազգային ջանքերին՝ միջազգային իրաւունքի ընձեռած հնարաւորութիւններով, նաև միջեկեղեցական գործակցութեամբ կասեցնելու Ադրբեջանի նկրտումները Հայաստանի և Արցախի հանդէպ:

Բերում ենք ձեզ Մեր բարձր գնահատանքը և մաղթում, որ Բարձրեալ Տէրը պազնի ձեզ նորանոր յաջողութիւններ՝ ի պայծառութիւն Կանադայի Հայոց տիրախնամ Թեմի և ի բարօրութիւն կանադահայ Մեր սիրեցեալ զաւակների:

Թող Տերն ասասան ու անխռով պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և իր օրհնութեան ներքոյ պահպանի ազգս հայոց ի Հայրենիս և ի Սփիւռս:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝



ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 26-ն Մայիսի
յամի Տեառն 2021 և ի թուին հայոց ՌՆՀ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 2044